**Նոտարական ակտի կոդ:** 600-20221109-117-6431662
**Նոտարական ակտի գաղտնագիր:** C9WG3A

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 9

## 24.12.2009թ. կնքված և սեղանամատյանում թիվ 5764 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրից բխող թիվ 8 համաձայնագիրը ուժը կորցրած ճանաչելու մասին

ՀՀ քաղաք Աբովյան

« 09 » նոյեմբերի 2022թ.

Մենք՝ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքն՝ ի դեմս Աբովյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի, այսուհետ՝ «ՎԱՐՁԱՏՈՒ» և ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, որի անունից լիազորագրով հանդես է գալիս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ Արթուր Լևոնի Եղիազարյանը /ծնված 21.02.1994թ., նույնականացման քարտ 006196521, տրված 17.07.2017թ., 005-ի կողմից /այսուհետ՝ «ՎԱՐՁԱԿԱԼ», մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 24.12.2009թ. կնքված և սեղանամատյանում թիվ 5764 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում /այսուհետ՝ պայմանագիր/ փոփոխություն կատարելու մասին 07.04.2014 թ-ին կնքված թիվ 1 համաձայնագրի 1-ին կետի գ/ ենթակետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1. Ուժը կորցրած ճանաչել «24.12.2009թ. կնքված և սեղանամատյանում թիվ 5764 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին» 2022 թվականի մարտի 22-ին կնքված N 8 համաձայնագիրը:

1.2. Հաստատել 2022թ. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:

1.3. Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածվում են կողմերի միջև 2022թ. ապրիլի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

### 2. Այլ պայմաններ

2.1. Պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս /4/ հավասարազոր օրինակից: Համաձայնագրի մեկ օրինակը պահվում է նոտարի գործերում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

2.3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2.4. Սույն համաձայնագրի հավելված 1-ը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

| | |
|---|---|
| «ՎԱՐՁԱՏՈՒ»<br>ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնք<br>Հասցե՝ ք. Աբովյան, Բարեկամության հր.1<br>ՀՎՀՀ 03561498<br>Հ/Հ 900105201322<br>ՀՀ ՖՆ ԿԳ ԳՎ<br>Աբովյան համայնքի ղեկավար ՝<br>_______________ Է. Բաբայան<br>(ստորագրություն) | «ՎԱՐՁԱԿԱԼ»<br>ՀՀ պետական եկամուտների կոմիտե<br>ք. Երևան, Մ. Խորենացու 3, 7<br>ՀՎՀՀ 02647057<br>Հ/Հ 900011054013<br>Կենտրոնական գանձապետարան<br>Գործառնական վարչություն<br>ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի լիազորված անձ Արթուր Եղիազարյան, նույնականացման քարտ 006196521, տրված 17.07.2017թ. 005-ի կողմից<br>------------------------- Ա. Եղիազարյան<br>(ստորագրություն)<br>Արթուր Եղիազարյան |

ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՔՍԱՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ ԻՆՆԻՆ, սույն համաձայնագիրը վավերացվել է, իմ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտար՝ Նունե Մարտինի Մանուչարյանիս կողմից: Սույն համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Պարզված է համաձայնագիրը ստորագրողների ինքնությունը, նրանց գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորությունները՝ ստուգված են:

Գրանցված է գրանցամատյանում ---------11757--------- ով

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար ՆՈՒՆԵ ՄԱՐՏԻՆԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված 1
24.12.2009թ. կնքված և սեղանամատյանում թիվ 5764
համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության
պայմանագրից բխող թիվ 8 համաձայնագիրը ուժը կորցրած
ճանաչելու մասին թիվ 9 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2022թ. բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | ՀՀ ք. Աբովյան, Բարեկամության հր.1 հասցեում գտնվող վարչական շենքից 952.29քմ. տարածքի վարձակալություն | 475 000 | 713 000 | 951 000 | 1 189 000 | 1 427 000 | 1 665 000 | 1 903 000 | 2 141 000 | 2 379 000 | 2 855 000 | **2 855 000** |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**«ՎԱՐՁԱՏՈՒ»**
**ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնք**
**Հասցե՝ ք. Աբովյան, Բարեկամության հր.1**
**ՀՎՀՀ 03561498**
**Հ/Հ 900105201322**
**ՀՀ ՖՆ ԿԳ ԳՎ**
**Աբովյան համայնքի ղեկավար՝**

**Է. Բաբայան**
(ստորագրություն)

**«ՎԱՐՁԱԿԱԼ»**
**ՀՀ պետական եկամուտների կոմիտե**
**ք. Երևան, Մ. Խորենացու 3, 7**
**ՀՎՀՀ 02647057**
**Հ/Հ 900011054013**
**Կենտրոնական գանձապետարան**
**Գործառնական վարչություն**
**ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի լիազորված անձ Արթուր Եղիազարյան, նույնականացման քարտ 006196521, տրված 17.07.2017թ. 005-ի կողմից**

**------------------------- Ա. Եղիազարյան**
(ստորագրություն)


NOTARIAL TERRITORY NOTARY
RA KOTAYK MARZ